FB1520E#426-23/CB
31.08.2023թ.

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Նորք Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6,
Հեռ.՝ (+37410) 510000 (1515)
Էլ. փոստ՝ dealing@fcc.am
Հաշվետվություն թիվ 01, 31.08.2023

1. ՀՀ ԿԲ նախագահի 05.08.2022 թ. թիվ 1/400 Ա որոշման համաձայն՝ գրանցվել է «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Զվարթնոց» մասնաճյուղը:

2. ՀՀ ԿԲ խորհրդի 11.09.2022թ.-ի որոշմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա և ներկայանում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ անվամբ:

3. ՀՀ ԿԲ-ն 09.11.2022թ.-ին հաստատել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի ընդհանուր ժողովի թիվ FC001DEC#22/07/04-01/04 որոշումը կանոնադրության փոփոխության վերաբերյալ:

4. ՀՀ ԿԲ 26.04.2023թ. թիվ 1/209 Ա որոշմամբ որոշվել է գրանցումից հանել «Ֆասթ Բանկ» ՓԲԸ գլխավոր հաշվապահի (ի պաշտոնե նաև տնօրինության անդամ) պաշտոնում գրանցված Արտաշես Ավետյանին:

5. ՀՀ ԿԲ 26.04.2023թ. թիվ 1/209 Ա որոշմամբ Թաթուլ Թամրազյանը գրանցվել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի (ի պաշտոնե նաև տնօրինության անդամ) պաշտոնում:

6. ՀՀ ԿԲ 10.05.2023թ. թիվ 1/236 Ա որոշմամբ որոշվել է գրանցումից հանել Գործադիր տնօրենի-Տնօրինության նախագահի պաշտոնում գրանցված Դանիել Ազատյանին:

7. ՀՀ ԿԲ 31.05.2023թ. թիվ 1/285 Ա որոշմամբ Գարեգին Դարբինյանը նշանակվել է Գործադիր տնօրենի-Տնօրինության նախագահի պաշտոնում:

8. ՀՀ ԿԲ նախագահի 31.05.2023 թ. թիվ 1/286 Ա որոշման համաձայն՝ գրանցվել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի «Թումանյան» մասնաճյուղը:

9. Տեղեկացնում ենք՝ 10.07.2023թ.-ին մարվել են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 09.07.2020թ.-ին թողարկված 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 36 ամիս ժամկետ շրջանառությամբ, 6.5 % արժեկտրոնով, AMFSCRB24ER1 տարբերակիչ ծածկագրով պարտատոմսերը:

10. ՀՀ ԿԲ նախագահի 02.08.2023 թ. թիվ 1/403 Ա որոշման համաձայն՝ գրանցվել է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի «Սևան» մասնաճյուղը:

11. «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն 28.08.2023թ.-ին թողարկել է 4 մլրդ ՀՀ դրամ և 2 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով, համապատասխանաբար AMFSCRB27ER4 և AMFSCRB28ER2 տարբերակիչ ծածկագրերով, 11.5 % և 6.25 % տարեկան եկամտաբերությամբ, արժեկտրոնի եռամսյա վճարման պարբերականությամբ, 27 ամիս ժամկետայնությամբ անվանական արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր:

Հարգանքով,

Գործադիր տնօրեն-
Տնօրինության նախագահ՝ **Գարեգին Դարբինյան**

Կատարող՝
Արժեթղթերի դիլեր Արիաննա Մարայան
Էլ. փոստ՝ dealing@fcc.am
Հեռ.՝ (+37410) 51 00 00 (1515)